Առավոտ
ՈՒՐԲԱԹ 9.4.2004

Մելքոնյանցիներն ընդդեմ ՀԲԸՄ-ի

*Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ **Պերճ Սեդրակյանի** մեկշաբաթյա այցը Հայաստան՝ երեկ եզրափակվեց լրագրողների հետ հանդիպմամբ:*

Հարցերը բացառապես «Մելքոնյան» վարժարանը փակելու որոշմանն էին վերաբերում: Պրն Սեդրակյանը դեռ զարմացավ. *«Այս ամեն խոսակցություններն վերջ, ձեզ հետաքրքրողը միայն «Մելքոնյանի» փակումն է»:* Մեզ մասնավորաբար հետաքրքրում էր, թե Մելքոնյան եղբայրների կտակի ո՞ր կետի համաձայն է ՀԲԸՄ-ին վերադահված վարժարանը փակելու կամ չփակելու նպատակահարմարությունը որոշելու իրավասությունն: Ըստ Պ. Սեդրակյանի, տառադանք է ծանր ու դժվար փակելու որոշումը, բայց *«կրնաք վստահ ըլլալ, որ շատ իրավաբաններ կան, որ հստակ կըսեն, որ եթե իրավունք չունենայինք, ՀԲԸՄ-ն իր 250 մլն դոլարեն ավելի դրամագլխով այդպիսի անդատասխանատու քայլ չէր անի»:*

«Առավոտն» արդեն նշել է, որ ՀԲԸՄ ղեկավարության որոշումը *«առավելապես հիմնված է այն եզրակացության վրա, թե «Մելքոնյան» վարժարանը այլեւս չի կարող ստանձնել իր առաքելության մարտահրավերները Հայաշխարհի ներկա համատեքստում»:* Նշենք, որ գոյություն ունի նաեւ այլ տեսակետ, որն արտահայտվում է «Մելքոնյանի» շրջանավարտների website-ում՝ www.savemelkonian.org: ՀԲԸՄ-ի ընդդիմախոսներից մեկը՝ Հայկ Նազարյան անունով, երեկ ներկա էր ասուլիսին: Տարեսկզբին մելքոնյանցիները ձեռք են բերել Կարաոետ Մելքոնյանի կտակը: Մելքոնյանցիները հատուկ ընդգծում են, որ ՀԲԸՄ-ն ոչ թե Մելքոնյանի ավանդատերն է, այլ ավանդապահը: Ավելին, համաձայն կտակի, ՀԲԸՄ-ն կարող էր օգտագործել միայն մայր գումարից եկած տոկոսներն ու եկամուտները: Իսկ եթե ՀԲԸՄ-ն սնանկանար կամ այլեւս ի վիճակի չլիներ հոգալ դպրոցի կարիքները, ապա *«էջմիածինը պետք է ստեղծեր նոր ղեկավար մարմին, որն էլ նույն տոկոսների ու եկամուտների հաշվին կշարունակի դպրոցի կանոնավոր գոյությունը»:* Ի դեպ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, ՀԲԸՄ պատվավոր անդամ է: Սակայն առայսօր Մայր աթոռը որեւէ կերպ չի անդրադարձել այս հարցին:

Ըստ «Մելքոնյան»-ի շրջանավարտների, 78 տարի առաջ ստեղծված հիմնադրամը այժմ պետք է հասներ մոտ 1,4 միլիարդ դոլարի, սակայն կազմում է 5,5 միլիոն դոլար: Սա նշանակում է, որ դեռեւս 1980 թվականին վարժարանի որոշ հողերի վաճառքը եւս անօրինական էր՝ եզրակացնում են մելքոնյանցիները: Այն ժամանակ հողակտորը վաճառվեց բիզնես կենտրոն կառուցելու համար, ինչը պետք է լրացուցիչ եկամուտներ ապահովեր: Նույն աղբյուրի պնդմամբ, անցած տարվա օգոստոսից վարժարանում է ԱՄՆ քաղաքացի ոմն Գորդեն Անդերսեն, որը ամենայն հավանականությամբ վաճառելու է շենքը: Մելքոնյանցիները բազմիցս տեսել են, որ վերջինս զբաղված է շենքը եւ տարածքը չափել-չափչփելով: Մելքոնյանցիները հավաստիացնում են, որ գնորդն էլ է գտնված, գինն էլ է սահմանված՝ 80 մլն ԱՄՆ դոլար: Պ. Սեդրակյանը սրան լուրջ չի վերաբերվում եւ դեռ չգիտի, թե ինչ ճակատագրի կարժանանան փակված վարժարանի շենքն ու տարածքը:

ՀԲԸՄ ընդդիմախոսների ներկայացմամբ, իրենց ասել են, թե վարժարանի փակման արդյունքում մնացած միջոցները պետք է տրամադրվեն Հայաստանի համար կրթական ծրագրերի ու նաեւ Հայաստանում սփյուռքահայերի համար ամառային հայապահպանական ճամբար ծառայելուն: Մելքոնյանցիները սրան առանձնապես չեն հավատում եւ կարծում են, թե էջմիածինը լռում է, որ ՀԲԸՄ-ն չդադարեցնի եկեղեցու հայրդաց տների ֆինանսավորումը: Ճամբարների մասին խոսեց նաեւ պրն Սեդրակյանը: Ըստ նրա, եթե ամեն տարի մի որոշ ժամանակով Հայաստանում հավաքվեն հայ երիտասարդներ, շատ ավելի լավ օգտագործված կլինի Մելքոնյանների ժառանգությունը, քանի որ *«սփյուռքի երիտասարդներին իրար կապող եւ ինքնության ամենահզոր ազդակը հայրենի հողն է»:*

ԱՐԱՄ ԶԱՔԱՐՅԱՆ